



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՆԱԽԱԳԱՀ**

«28» օգոստոսի 2017թ.

№ 2/2823-Ա

**Հ Ր Ա Մ Ա Ն**

**Ա.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ԵՎ Ա.ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 10-ի թիվ 224-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 18-րդ կետի 14-րդ ենթակետով և հիմք ընդունելով հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի 2017 թվականի թիվ 31/2017 եզրակացությունը

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ**

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության ստուգումների թիվ 2 բաժնի գլխավոր հարկային տեսուչ Արման Համբարձումյանին և նույն վարչության ստուգումների թիվ 7 բաժնի գլխավոր հարկային տեսուչ Աշոտ Միքայելյանին հայտարարել «ԲԱՆԱՎՈՐ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ»:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչության պետ Ա.Վարդանյանին.

- սույն հրամանը ծանոթացնել ողջ անձնակազմին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Վ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ